Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ֆ 200 Ֆ

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԿՆՔՎԱԾ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ ԱՐՇՄԻՈՒԹՅԱՆ
ՅԵՎ ԺՈՂՏԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՄԻՋԵՎ

ԵԵՐԵՎԱՆ

331
2017

ՀԱՎԱՔԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԿՆՔՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՈՂՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ

ՑԵՎ

ԺՈՂՏԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՄԻՋԵՎ



ՅԵՐԵՎԱՆ

1931

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
Գրաբեվպգ. (ը) 6478
Պատվեր 2440
Տիրաժ 500

ՀԱՅԿՈՄՍԿԻՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
1-2936գր

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1. Սույն հավաքական պայմանագիրը կնքվում է մեկ կողմից Հայաստանի կառուցող բանվորների անունից, Կառուցողների Արհմիության Կենտրոնական Վարչության (վորը հետագայում կոչվելու է «Միություն») հանձինս նրա ներկայացուցիչ ընկ. ՎԱՐՇԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, մյուս կողմից Ժողովրդական Թատրոնի կառուցման կոմիտեի—հանձինս ակադեմիկ Ա. ԹԱՄԱՆՅԱՆԻ (վոր հետագայում կոչվելու է Ժողտան կոմիտե) միջև:

2. Սույն հավաքական պայմանագրի նպատակն է՝ ապահովել բանվոր դասակարգի առաջ դրված խնդիրների ավելի քան արագ կերպով կատարումը, ժողովրդական տնտեսության, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և յերկրի ինդուստրացման բնագավառներում, ու անչեղորեն և արագ կերպով բարելավելու Հ. Ս. Խ. Հ. կառուցող բանվորների ու ծառայողների նյութական, կուլտուր-դրթական և սոցկենցաղային պայմանները:

3. Սույն հավաքական պայմանագրի 2-րդ կետի՝ Ժողովրդական Թատրոնի շինարարական աշխատանքների վրա բոլոր տեսակի գործարքային աշխատանքներում զբաղված վարչատնտեսական կազմը, բոլոր հար-

տարապետ-տեխնիկ աշխատավորները և բանվոր-ծառայողները իրենց վրա պարտավորություն են վերցնում լրիվ կերպով կատարելու և գերակատարելու 1931 թվի արդիֆիցիրումներով նախատեսված քանակական և վորակական ցուցանիշները, արտադրության պրոցեսների ճիշտ կազմակերպմամբ, հարմածային աշխատանքների մեթոդի զարգացրությամբ, պրոլետարական դիսցիպլինայի ամրացմամբ,— ունենալ կոմունիստական վերաբերմունք դեպի աշխատանքները: Դրա հետ միասին Վարչությունը պարտավորվում է ապահովել անհրաժեշտ արտադրական պայմանները այդ խնդիրները լիակատար ածելու համար, ինչպես և պարտավոր է անպայման, իր ժամանակին, կատարելու սույն պայմանագրի բոլոր կետերը՝ աշխատավարձի կարգավորման և աշխատանքի իրավական պայմանների վերաբերյալ. միաժամանակ աջակցելու և բարելավելու բանվորների կուլտուրական, սոցկենցաղային և բնակարանային պայմանները:

4. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է ԿԻՐԱՌԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

ա) Տնտեսական տարվա առաջին կես ամսից (հունվարից) ապահովել արտադրության զարգացումը, համաձայն արդիֆիցիրումներով նախատեսված չափի:

բ) Սույն պայմանագիրը ստորագրելուց 15 որվա ընթացքում արդիֆիցիրը հասցնել կատուցվող շենքերին, գործարաններին և ցեխերին, իսկ 20 որվա ընթացքում հասցնել այն մինչև ազրեգատը, ստանոկը և անհատ բանվորը:

գ) Արդիֆիցիրումներով նախատեսված ռացիոնալացման միջոցների հետ զուգընթաց՝ տնտեսական տարվա ընթացքում կիրառել նաև այն միջոցները, վորոնք կառաջադրվեն բանվորների, ճարտ.— տեխնիկների և ուրիշների կողմից, ժամանակի պլանի գերակատարմանը: Միևնույն ժամանակ առանց հետաձգելու կիրառել կյանքում բանվորների դյուտարարությունները:

դ) Սույն հավաքական պայմանագիրը ստորագրելուց 20 որվա ընթացքում վորոշել գործադրվող շինանյութերի, հումքի, վառելիքի և էլեկտրոեներգիայի չափը և կազմակերպել ներքին հսկողություն վորոշված նորմաների պահպանումը և պատրաստված նյութերի վորակը ստուգելու համար:

ե) Կազմակերպել պլանային աշխատանք կորուստների դեմ պայքար մղելու՝ թե արդյունաբերության և թե շինարարարության մեջ:

զ) 25 որվա ընթացքում մշակել հրահանգ տասնապետների, ցեխային վարպետների և նրանց ոգնականների իրավունքների ու պարտականությունների մասին, միանձնյա զեկավարության սկզբունքը լրիվ կիրառելու նպատակով, միաժամանակ ուժեղացնել վարչական և տեխնիկական աշխատավորների պատասխանատվությունը, ինչպես և շինարարությամբ և արդյունաբերությամբ զբաղված բանվորների մեջ, իրենց հանձնարարված աշխատանքները կատարելու համար:

է) Ապահովել սույն պայմանագրով նախատեսված բոլոր աշխատանքների կատարումը, մասնավորապես աշխատավարձի և աշխատանքի պայմանների ու աշխատանքի պայմանների ստուգման գործը:

ը) Վոչ ուշ քան ամեն ամսի 25-ը տալ հետևյալ ամսվա արտադրանքի աշխատանքի պլանը բոլոր ցեխերին ու ամեն մի ինգոդյակը նկավելուց առաջ նույնը

տալ բրիգադներին ու բանվորական ավելի փոքր միավորներին։

Թ) Արդիենալանով նախատեսված ռացիոնալացման միջոցները գործադրելու հետ զուգընթաց և անպայման գործադրել նաև այն միջոցները, որոնք սույն պայմանագրի գործելու ընթացքում կառաջարկվեն աշխատակից բանվորների և ճարտարապետ-տեխնիկների կողմից, և որպիսի առաջարկները հավանություն գտած կլինեն Վարչության կողմից։

ժ) Կազմակերպչական և տեխնիկական ուժանդակություն ցույց տալ հետագայում ավելի ևս ծավալելու և ամրացնելու սոցմրցումն ու հարվածայնությունը։

ժա) Ժամանակի ընթացքում կազմակերպել պլանային հետախուզական աշխատանքներ, տեխն. նորմիրովկայի բյուրոյի համար արտադրության ռացիոնալացման, արտադրողականության բարձրացման և աշխատանքները նորմիրովկայի յենթարկելու նպատակով։

ժբ) Ապահովել շինարարական աշխատանքները ամբողջ տարվա ընթացքում, ստեղծել մշտական բանվորական կադր, ուժեղացնել աշխատանքների մեքենայացումը և ստանդարտիզացիա մտցնել շինարարության մեջ։ Շինարարության ամբողջ ընթացքում ապահովել շինանյութերի անընդհատ մատակարարումը, բանուժի ռացիոնալ ոգտագործումը, ինչպես և ներքին միջոցների ոգտագործումը։

ժգ) Սոցմրցման ու հարվածայնության հետագա զարգացման համար միջոցներ ձեռնարկել, առաջին հերթին հարվածայիններին տալով հանրակացարաններ և արտադրության մեջ աշխատելու լավ հնարավորություններ։

ժդ) Բաց թողնել անհրաժեշտ միջոցներ բանվորների վարակը բարձրացնելու համար։

ժե) Ճիշտ և կանոնավոր հաշվառում կատարել սոցմրցման, արտադրողականության բարձրացման համար, ցուցադրելով ստացված եֆֆեկտները։

ժզ) Հատկացնել պարգևատրման համար 1000 ռ. գումարի մի ֆոնդ արժանիներին պարգևատրելու համար։

Ծանոթություն.—1. Վարչությունը պարտավոր է կազմակերպել հարվածային բրիգադներ այն հաշվով, որ համապատասխան վարակի խմբեր կազմակերպվին։

Ծանոթություն.—2. Հետ ընկած շինարարական կարևոր ցեխերին ուժանդակելու համար Վարչությունը ու Տեղկոմը պարտավոր են կազմակերպել հարվածային բրիգադներ ավյալ շինարարության լավագույն հարվածայիններից։

5. ՏԵՂԿՈՄԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

ա) Վճռական կերպով ամրապնդել աշխատիսցիպլինան, պայքարել պրոգուլների, պոկողականության դեմ, աշխատիսցիպլինան խախտողների և բանուժի հոսունության դեմ։

բ) Պարբերաբար հսկել արդիենալանի կատարման քանակական ու վարակական ցուցանիշներին,—վարի համար յենթարկել մորիլիզացիայի ձեռնարկության ամբողջ բանվորությունը,—սոցմրցման ու հարվածայնության ծավալման և ամրացման, ինչպես և արտադրական խորհրդակցությունների ու դյուտարարության միջոցներով։

գ) Վարչության հետ միասին կազմել և պարբերաբար ինֆորմացիա տալ բանվորությանը սոցմրցման և հարվածայնության ընթացքի մասին։ Գործնական ո-

ժանդակություն ցույց տալ Վարչության հետամնաց շինարարական մասերին ոգնելու գործում, վերացնելով արդիլնպլանների իրագործման բոլոր դժվարությունները:

դ) Իրագործել և կազմակերպել մասսաների հսկողությունը յեբկու կողմերի վրա ևս, սույն հավաքական պայմանագրի համաձայն՝ նրանց հանձնարարված պարտավորությունների ճիշտ կատարման համար, ձեռք առնելով ամեն տեսակի միջոցներ—պայմանը խախտող կողմերի և անհատների վերաբերմամբ:

ե) Կողմերը պարտավորվում են պլանի կատարմանը վրեւ վանդ սպառնալու դեպքում, միասին ձեռք առնել կոնկրետ միջոցներ արդիլնպլանների կատարման ամեն տեսակի խոչընդոտները վերացնելու և նրա կատարումը ապահովելու համար:

զ) Հարվածային բրիգադներին պարբերաբար հրահանգել և ղեկավարել: ՃՏՍ-ի միջոցով կազմակերպել հարվածայինների և սոցմրցման մասնակցողների համար տեխնիկական ժանդակություն: Կազմակերպել խմբակային արտխորհրդակցություններ և ապահովել ճարտ.-տեխնիկ աշխատավորների և Վարչության մասնակցությունը այդ խորհրդակցություններում: Ճարտ.-տեխնիկական աշխատավորներն ել իրենց հերթին պարտավոր են իրենց խմբակների արտադրական խորհրդակցություններին մասնակցել թե անհատորեն և թե խմբակի հետ միասին (մրցման մեջ մտնել արտադրական խնդիրների և ռացիոնալացման լավագույն իրագործման համար):

ե) ՃՏ բոլոր աշխատակիցներին, բանվորներին և ծառայողներին, վորոնք ավարտել են այս կամ այն վորակավորման դասընթացները, պարտավորեցնել տվյալ ձեռնարկությունում աշխատել վոչ պակաս յերկու տարուց:

Ց. ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՀՆԵՐԹԻՆ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ՝

ա) Միանգամայն վերացնել առանց հարգելի պատճառների կրկնվող պրոգուլները, լրիվ ոգտագործել բանվորական օրը, ձգտել գերակատարելու տրված արտադրական պլանը, միաժամանակ լավացնելով գործի վորակը:

բ) Կահավորությունը և գործիքները լավ պահպանել, անտեսարար գործադրել հումույթը և նյութերը, թույլ չտալ սահմանված չափից ավելի ծախսել բանուժը, նյութերը, հումույթը և այլն:

գ) Ամեն կերպ բարձրացնել արտադրության վորակը, բարեխիղճ վերաբերմունքի շնորհիվ վերացնել բրակը և փոխադարձ հսկողություն ունենալ միմյանց վրա:

դ) Վարչության կարգադրությունը ժամանակին կատարելով, աջակցել միանձնյա ղեկավարության սկզբունքի կիրառմանը:

ե) Պարբերաբար բարձրացնել իրենց վորակը, հաճախելով պոլիտեխնիկական դասընթացները—դպրոցները, խմբակները և այլն:

զ) Անպայման կատարել ներքին կարգապահության կանոնները:

է) Մինչև տարվա վերջը իր ցանկությամբ չթողնել ձեռնարկությունը կամ շենքը և պայքար տանել շուտ-շուտ տեղից-տեղ փոխադրվողների դեմ: Բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը 33 տո-

կոսով, ինֆլյացիան իջեցնել 11,5 տոկոսով, աշխատավարձը 4 տոկոսով բարձրացնելու համար:

ը) Վերացնել բանվորների մեղքով առաջացած բրակ աշխատանքները և նրանց վերաշինելու ցերեվույթը:

7. Սույն հավաքական պայմանագիրը տարածվում է թե ձեռնարկություններում կամ շինքում աշխատող բոլոր բանվորների և աշխատավորների վրա և թե պայմանագրի գործելու ընթացքում նոր ընդունվողների վրա, ինչպես և նույն ժամանակաշրջանում նոր սկսվելիք ձեռնարկությունների վրա, անկախ վարձելու ժամանակամիջոցից:

Ծանոթություն.— 1. Չի տարածվում ժամանակավորապես աշխատողների վրա, բացառությամբ արձակուրդ գնացածների և հիվանդների տեղ աշխատողների: Ժամանակավորապես աշխատողների վրա սույն պայմանագրի փոխարեն տարածվում են գործող օրենքները: (Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1927 թ. հունվարի 14-ի վորոշումը):

Ծանոթություն.—2. Շինարարության մեջ աշխատող մնացած բոլոր աշխատավորների վրա սույն Պայմանագիրը տարածվում է, նույնիսկ յեթե նրանք վարձված են ժամանակավորապես:

8. Ժամանակավոր աշխատավոր վարձելու դեպքում Վարչությունը պարտավոր է գրավոր ձևով հայտնել աշխատողին ժամանակամիջոցի մասին:

9. Հավաքական պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամանակով, սկսած 1931 թ. հունվարի 1-ից մինչև 1931 թ. դեկտեմբերի 31-ը: Այս պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրից սկսած՝ 1929/30 թ. նախկին պայմանագիրը կորցնում է իր ուժը:

10. Պայմանագրի գործելու ժամանակամիջոցում նրա առանձին կետերը կամ մասերը կարող են փոփոխության յենթարկվել միմիայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

11. Հետին թվով չի թույլատրվում այնպիսի փոփոխություն մացնել սույն պայմանագրի մեջ, վորը վատացնում է աշխատանքի պայմանները:

12. Յեթե մինչև այս պայմանագրի ժամանակամիջոցը լրանալը նոր հավաքական պայմանագիր չի կնքվում, բանվոր-ծառայողների աշխատանքի պայմանները կարգավորվելու յեն սույն պայմանագրով:

13. Աշխատանքի պայմանների բարելավումը, վոր նախատեսվում է նոր պայմանագրի մեջ, ուժի մեջ է մտնելու նոր պայամանագրի գործելու օրից:

2. ԿԱԴՐԵՐ

14. Նոր ընդունելություններ կատարելու դեպքում,—ադատ պաշտոնների ու տեղերի համար մարդ վերցնելիս,—Վարչությունը պարտավոր է առաջին հերթին առաջ քաշել ավելի վորակյալ հարվածայիններին թե բանվորներից և թե ծառայողներից, վորոնք պատրաստվել են տվյալ աշխատանքի համար, առաջնությունը տալով տվյալ ձեռնարկություններում ավելի յերկար ժամանակ աշխատողներին:

15. Բանվորների և ծառայողների ընդունելությունները կատարվելու յեն միմիայն Աշխատողկոմատի «Կադրերի Վարչության» կամ նրա տեղական մարմինների միջոցով: Վերջինիս հրաժարվելու դեպքում Վարչությունը կարող է կողմնակի մարդկանց ընդունել. բայց այդպիսի ամեն մի ընդունելը նախորոք պիտի համաձայնեցնել տեղկոմի կամ բանկոմի հետ:

ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ՝

ա) Արհմիության անդամները և նրանց հետ համատարածվածները.

բ) Հարվածայինների վորդիները, դրանց կանայք, քույրերը և յեղբայրները, իսկ վոչ հարվածայիններից՝ նրանք, վորոնք վոչ պակաս 3 տարուց աշխատել են ովյալ ձեռնարկությունում: Բացի այդ, Վարչությունը պարտավոր է առաջին հերթին ընդունել չին-աշխատանքի այն բանվորներին, վորոնք ավարտել են Կենտրոնական Ինստիտուտը (ՑԻՏ) և ուղարկված են աշխատանքի Աշխատողկոմատի որգանների կողմից, համաձայն վարչության պահանջի:

Անկախ Աշխատողկոմատի «Կադրերի Վարչությունից», բայց բանկոմ-խմբկոմի համաձայնությամբ, կարելի յե ընդունել հետեվյալ պաշտոնյաներին (տես կցված ցուցակը, հավելված № 1):

16. Ամեն մի նոր ընդունվող բանվոր-ծառայողի մերաբերյալ տեղկոմը կարող է բողոքարկել Վարչությունից այդ մասին հայտարարություն ստանալուց 3 որվա ընթացքում:

Յեթե տնտեսմինը չի հարգում բանկոմի կամ տեղկոմի բողոքը, գործը հանձնվում է Գ. Կ. Հ.-ին քննության և վերջնական վորոշումը պարտադիր է կողմերի համար:

17. Ճարտ.-տեխ. այն աշխատավորների ընդունելությունները, վորոնք իրենց ցանկությամբ փոխադրվում են մի ուրիշ ձեռնարկությունից, թույլ է տրվում միայն բանկոմի (խմբկոմի) համաձայնությամբ և նախկին աշխատանքի վայրից գրավոր համաձայնություն և թույլտվություն ներկայացնելուց հետո:

18. Աշխատողկոմատի «Կադրերի Վարչությունից» գործուղված աշխատավորին պետք է ընդունել և փորձնական աշխատանք տալ մինչև ժամը 12-ը, յեթե յիկողները գալիս են շուտ, իսկ յեթե այդ ժամանակից ուշ են ներկայանում, ապա սկսած հետևյալ բանվորական որից: Յեթե հիշված ժամանակամիջոցում նրանց աշխատանք չի հանձնվի կամ փորձնական աշխատանք չտրվի, Վարչությունը պարտավոր է նրանց վճարել սկսած վերոհիշյալ ժամկետներից մինչև գործ հանձնելը, կամ աշխատանքին հետ ուղարկելը: Այդ ժամանակամիջոցի համար աշխատավարձը տրվում է այն կարգով, ինչ կարգի պահանջ ներկայացվել է Կադրերի Վարչությանը, իսկ յեթե պահանջագրի մեջ հիշատակված չլինի այդ մասին, պետք է վճարել այն կարգի համաձայն, ինչ գործի համար վոր ուղարկված է Կադրերի Վարչությունից:

19. Աշխատավարձ չի վճարվում, յեթե հենց ուղարկված որը Վարչությունը մերժում է ընդունելը և հայտնում է անհամապատասխան լինելու մասին Աշխատողկոմատի Կադրերի Վարչությանը:

20. Գործի ընդունելու համար փորձնական աշխատանք կատարելու ժամանակամիջոցը վորոշվում է՝

Բանվորների համար՝ 6 բանվորական որ.

Գրասենեկային և հաշվային ծառայողների համար մինչև ավագ հաշվետարները ներառյալ՝ 12 բանվորական որ. ավելի բարձր հաշվային, գրասենեկային և ճարտ.-տեխ. աշխատավորների նկատմամբ՝ 24 բանվորական որ:

21. Այն բանվոր-ծառայողները, վորոնք մնում են աշխատանքում փորձնական աշխատանքի համար սահմանված որերից ավելի, համարվում են ընդունված:

22. Անչափահասների բրոնյան սահմանվում է 3 տարուա:

23. Բրոնյայի թիվը պետք է լրացնել վոչ ուշ, քան յուրաքանչյուր հաջորդ ամսում, ըստ վորում առաջին հերթին պետք է ընդունել հարվածայինների վոլգինեբին և այն բանվորների վոլգիններին, վորոնք յերկար ժամանակ աշխատում են ավյալ Վարչության մոտ, ինչպես և արժեքավոր առաջարկներ անողների վոլգիններին, նախկին պարտիզաններին, աշխատանքի հերոսների վոլգիններին և մանկատան նախկին սաներին:

24. Վարչությունը պարտավոր է անչափահասներին ընդունելուն պես նրանց արամադրել հանրակացարան և արհեստանոցներ աշխատելու համար (համաձայն հետագա կետերի):

25. Բոլոր անչափահասներին նախ արգելվում է սև աշխատանքներ հանձնարարելը և յերկրորդ՝ նրանց պետք է տեղավորել շինուսներում սովորելու: Բրիգադային աշակերտությունը կարելի յե պահել միայն այն դեպքում, յերբ շինուսներում և ֆարբրիկներում տեղ չի լինում:

26. Բրիգադային կարգով սովորելու դեպքում, Վարչությունը պարտավոր է սովորեցնող բրիգադիրներ նշանակել տեխնիկապես ավելի պատրաստի բանվորներից (համաձայն ներքոհիշյալ կետերի):

27. Բրոնյայի և անհատական կարգով սովորող աշակերտությունը պետք է փոխադրվի շինուսի դասընթացները՝ սովորելու՝ դրանց կազմակերպվելուն պես:

Նշանագրություն.—Իրրև բրոնյա վարձվող անչափահասների թիվը, ինչպես և առհասարակ անչափահասներից շինուսում սովորողների և բրիգադային աշակերտների թիվը, պետք է սահմանվի

արենքով նախատեսված չափով և Վարչությանն բաց թողնված միջոցների սահմաններում:

28. Վարչությունը պարտավոր է լրիվ ապահովել սովորողներին գործիքներով, դասատուների կազմով և բոլոր նյութերով, վորոնք գործադրվելու յեն նրանց արտադրական պրակտիկայի ընթացքում: Բացի այդ պետք է ապահովել նրանց համապատասխան կահավորված շենքերով և արհեստանոցի սարքավորմամբ:

29. Դրանց սովորելու ընթացքում Վարչությունը պարտավոր է 6 ամիսը մի անգամ պարբերաբար վերանայել աշակերտության վարակը և համաձայն նոր փորձնական աշխատանքի, նրանց անցկացնել ավելի բարձր կարգի: Թույլ և տրվում աշակերտներին այդ ժամկետից առաջ իսկ փորձնական աշխատանք տալ՝ բարձր կարգի անցկացնելու համար:

30. Ամարտական տարվա 2-րդ կեսում աշակերտներին պետք է թույլ տալ ինքնուրույն աշխատելու արտադրության մեջ: Տրված աշխատանքը կամ հանձնարարությունը լինելու յե նրա ունեցած արտադրական պրակտիկայի սահմաններում այն հաշվով, վոր դա նրա սովորելու վրա վատ չանդրադառնա: Այս դեպքում նրանք վարձատրվում են չափահասների հետ հավասար չափով՝ ըստ գործարքային դրույքների. իսկ կրճատված ժամերի համար նրանց վճարվում է տարիֆային դրույքներով աշակերտական ցանցի համաձայն:

31. Այն աշակերտները, վորոնք աշխատում են գործարքով աշխատող վարպետների մոտ վորպես յենթավարպետ, ինչպես և գործարքով աշխատող բրիգադայում, սոսանում են գերարտադրանքի միջին տարոսը ևս, համաձայն իրենց տարիֆային դրույքի:

32· Կաղրերի պատրաստման համար Վարչությունը 1931 թ· արդֆինպլանով նախատեսված աշխատավարձի գումարից պարտավորվում է հատկացնել Աշխ-Ժողկոմատին կամ Հայպետշինին՝ իրրև կաղրեր պատրաստող հիմնարկների՝ 4 տոկոս:

33· Յեթե շենքի վրա աշխատում է 200-ից վոչ պակաս սեվագործ յերիտասարդ բանվորություն, խոշ շենքի ավարտը կարող է մի տարուց ավելի տեվել, անհրաժեշտ է կազմակերպել մի տարվա տեվողությամբ դասընթացներ այդ յերիտասարդության համար, նրանց վորակավորելու ավելի վորակյալ գործի համար: Դասընթացների համար Վարչությունը տրամադրում է համապատասխան շենք և կահավորում, ինչպես և հոգում է դասատուների ծախքը: Այդ դասընթացները ավարտողներին պետք է հանձնարարել ավելի բարձր վորակի աշխատանք, համաձայն նրանց բարձրացած վորակի:

Թեորիայով և պրակտիկայով պարապելու համար Վարչությունը սովորողներին պարտավոր է ազատել աշխատանքից վոչ ավելի, քան ամսական 10 ժամ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ·—Ուսման ժամկետը, պետք է այնպես դասավորված լինեն, վոր չի խանգարեն աշխատանքի նորմալ ընթացքին:

34· Վորակը բարձրացնելու համար սովորող բանվորներին աշխատավարձ վճարվելու յե հետևյալ կարգով·

ա) Տվյալ ձեռնարկության սեվ աշխատավորներին և անվորակ բանվորներին, վորոնք վերավորակավորման նպատակով ազատված են աշխատանքներից՝ վորոշ ժամերով՝ աշխատավարձը տրվելու յե գործարքի գնացուցակներով և վոչ պակաս իր այն տարիֆային

դրույքից, վորը վերավորակավորվելուց հետո պետք է ստանա:

Ծանոթություն·—կենտրոնական Աշխ· Ինստիտուտի (ՅԻՏ) կուրսերն ավարտողները, վորոնք այնպիսի աշխատանք են կատարում, վոր չի արդարացնում պահանջված նորման, առաջին յերկու պտուտ պետք է ստանան տարիֆ-դրույքով: Հետագայում նույնպես չարդարացնելու դեպքում, ապահովելը չպետք է անցնի նույն տարիֆ-դրույքի 2/3-ից:

35· Վորակավորման դասընթացները ավարտած ճարտ·-տեխնիկ աշխատավորները, ծառայողները, ինչպես և այն աշակերտները, վորոնք սովորել են շինություններում, պարտավոր են աշխատել տվյալ ձեռնարկությունում վոչ պակաս, քան 3 տարի:

36· Գործարքով աշխատող վորակյալ այն բանվորներին, վորոնք իրենց անմիջական աշխատանքների հետ զուգընթաց բրիգադայի կամ անհատական կարգով աշակերտներ են ուսուցանում, Վարչությունը պարտավոր է լրացուցիչ կերպով վարձատրել սովորող աշակերտների ամսական աշխատավարձի 15 տոկոսի չափով:

ա) Յեթե աշակերտների ուսուցումը կատարվում է բրիգադային միջոցով, ապա բրիգադայում յեղած բոլոր վորակյալ բանվորներին (սկսած 4 կարգից) նույնպես Վարչության հաշվին տրվում է լրացուցիչ վարձատրություն սովորող աշակերտների ամսական աշխատավարձի գումարի 15 տոկոսի չափով, վորպիսի գումարը բաժանվում է բրիգադայում աշխատավոր վորակյալ բանվորների միջև, քան նրանց տարիֆային կարգերի:

Ծանոթություն·—Նույն կարգով վարձատրվում են նաև այն բանվորները, վորոնք սովորում են անչափահաս բանվորները:

ԵՐԻՎԱՆ
ՀԱՄՄԱՐ

Ծանոթություն.—2. Վարչությունը պարտավոր է շինության ավարտողներին արամադրել կահավորված ճաշարան և բուֆետ, իսկ շինության անշափահաս աշակերտների համար կազմակերպել տաք նախաճաշեր:

Ծանոթություն.—3. 200 ավարտածներ ունենալու դեպքում Վարչությունը պարտավոր է բանալ նախնական բժշկական ոգնության կայան:

37. Վարչությունը պարտավոր է բանվորներից 3 հոգու ուղարկել տասնապետական դասընթացներ և ավարտելուց հետո նրանց տալ շենքերում արտադրական պրակտիկայի տեղեր կամ աշխատանք: Դասընթացներում սովորելու ընթացքում Վարչությունը պարտավոր է ազատել նրանց աշխատանքից ամսական 6 ժամից վոչ ավելի:

Բացի այդ, Վարչությունը պարտավոր է ուղարկել 1 տասնապետի տեխնիկական կուրսերը և 1 տեխնիկի՝ ճարտարապետական, իսկ 1 ճարտարապետի՝ վերարտադրական դասընթացներում սովորելու:

38. Վարչությունը պարտավոր է արտելների փոխարեն կազմակերպել ցեխային բրիգադներ և նշանակել բրիգադիրներ: Բրիգադիրներ նշանակել առաջին հերթին հարվածայիններից, լավագույն արտադրական բանվորներից, արժեքավոր արտ. առաջարկներ անողներից և դյուտարարներից: Բրիգադիրը պարտավոր է իր բրիգադի հետ հավասար աշխատել և աշխատավարձ ստանալ իր ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՔ ԿԱՐԳՈՎ: 40 հոգուց ավելի կազմով բրիգադի համար ցանկալի է համարվում ունենալ ազատ բրիգադիր Վարչության հաշվին, վորը ստանալու է կրտսեր տասնապետի դրույքով, սակայն վոչ պակաս իր բրիգադում ստացած միջին աշխատավարձից:

39. Համաձայն Համամիութենական Աշխատողկոմատի, Ժ. Տ. Գ. Խ.-ի, Հազորդակցության Ժողկոմատի և Կառուցողների Կենտկոմի 1930 թ. № 349-29 նոյեմբերի շրջաբերականի՝ Վարչությունը պարտավորվում է ինքնամրցման յենթարկել շինարարության վրա աշխատողներին:

40. Վարչությունը պարտավոր է վճարել իր բնակության վայրից վերադարձող բանվորին հանապարհածախք, յեթե ճանապարհը 1000 կիլոմետրից ավելի է:

Ծանոթություն.—Յեթե ինքնամրցման պայման կնքած բանվորները պայմանաժամից առաջ հեռանում են իրենց կամքով կամ ներքին կարգապահության պայմանները խախտելու հետևանքով, համաձայն Գ. Կ. Հ.-ի վարչման՝ Վարչությունը պահում է, նման բանվորի աշխատավարձից, չվճարված ճանապարհածախքը:

41. Բանվոր-ծառայողների կրճատումը կատարվում է Վարչության և տեղկոմի նախորոք կայացրած համաձայնությամբ: Տեղական աշակերտները կրճատման յենթակա չեն, այլ փոխադրվում են ուրիշ ձեռնարկություններ աշխատելու (վորոշված նորմաների սահմաններում):

Հաստիքի (շտատի) կրճատման դեպքում աշխատանքում թողնելու նախապատվությունը տրվում է (մյուս հավասար պայմաններում)՝

ա) Արհմիության անդամներին.

բ) 1931 թ. զինակոչի յենթականերին.

գ) Հարվածային բանվոր-ծառայողներին, ինչպես և յերկար ժամանակ ավյալ ձեռնարկությունում աշխատողներին, վորոնք նկատողության կամ տուգանքի տակ ընկած չեն աշխատանքային խախտելու համար.

դ) Ուրտադրական կոմունաների անդամներին.

ե) Բաղաքի բանվորներին, վորոնք գյուղական յեկամուտներով չեն ոգտվում.

զ) Կենտրոնական Ինտերատոմ (ՅԻՏ), շինուս և յերիտասարդության դպրոցներ ավտարտոդներին.

է) Ինքնամբացման պարման կնքոգներին:

42. Յերբ հեռացվողը համաձայն չի Վարչության առաջարկած ցածր աշխատանքը կատարելուն, մինչեվ հեռացնելը՝ Վարչությունը պարտավոր է հայտնել տեղկոմին կամ բանկոմին կամ խմբկոմին այդ մասին: Տեղկոմի բողոքելու դեպքում գործը հանձնվում է ԳԿՀ-ին:

43. Ժամանակավորապես աշխատունակությունը կորցրած աշխատավորին արձակելը թույլատրվում է, յեթե այդպիսին 4 ամսից ավել գործի չի հանդիսում (չհաշված հղության և արձակուրդի ժամանակամիջոցը):

44. Աշխատանքի ընթացքում պատահած դժբախտ պատահարների հետևանքով ժամանակավորապես աշխատունակությունը կորցրածին արգելվում է հեռացնել մինչեվ առողջանալը կամ բժշկական հանձնաժողովի կողմից անաշխատունակության ատաիճանը վորոշելը:

45. Այն բանվոր և ծառայողները, վորոնք աշխատում են շինարարության վրա և համաձայն Աշխարհնագրքի 47 հոդվածի «ա» և «բ» կետերի պետք է հեռացվեն, Վարչությունը պարտավոր է հեռացնելուց առաջ նախազգուշացնել հետեվյալ կարգով. մի ամսից պակաս աշխատողին՝ 7 որ առաջ, 6 և 6-ից ավելի ամիս աշխատողներին՝ 15 որ առաջ: Միևնույն ժամանակ հեռացողներին պետք է հայտարարել գրավոր կերպով նրանից այդ մասին ստորագրություն ստանալով, և բացի այդ պետք է նշանակել հաշվեգրքույկում հեռացման ժամկետը:

46. Վարչության կարգադրությամբ կամ աշխատանքների կրճատման հետևանքով աշխատանքից հեռացվող որավարձով աշխատող բանվորներին վերջնական հաշիվները պետք է փակել վոչ ուշ. քան կրճատման հետևյալ որը, իսկ գործաբքով աշխատողների վերջնական հաշիվները պետք է փակել կրճատման որից սկսած 2 որվա ընթացքում:

47. Բանվորի արձակման որը համարվում է վերջնական հաշիվների որ: Յեթե բանվորներին հատանելիք բոլոր տեսակի գումարները վերևում ընդունված ժամանակամիջոցում լրիվ չեն վճարվի, բանվորները համարվելու յեն աշխատանքի մեջ և մինչեվ նրանց հետ վերջնական հաշիվների փակման որը պետք է վարձատրվեն Վարչության կողմից, վոչ պակաս նրանց տարիֆային դրույքներից:

48. Յեթե բրիգադայում աշխատողների 50%-ը և ավելին իրենց ցանկությամբ հեռանում են գործից դեռ գործը չվերջացրած, նրանց վճարվում և տարիֆային կարգով, իսկ վերջնական հաշիվը նրանց հետ փակվում է մոտիկ ապագայում, յերբ ամբողջ բրիգադան լուծարքի կենթարկվի: Հեռացողները յեթե ավյալ վայրից ևս հեռանում են, լուծարքից հետո նրանց հասանելիքը վարչությունը՝ իր հաշվով՝ փոխադրում է թողած հասցեների համաձայն:

49. Իսկ յեթե Վարչության կարգադրությամբ բրիգադայի մի մասը հեռացվում և համաձայն Աշխարհնագրքի 47-րդ հոդվածի «ա» և «բ» կետերի, Վարչությունը

նը պարտավոր է չափել և հաշվել կատարած աշխատանքները և վերջնական հաշիվը փակել նրանց հետ, կամ համաձայն ..... հոդվածի հաշվել միջին աշխատավարձի չափով:

50. Այն բանվոր-ծառայողները, որոնք իրենց բանկությամբ հեռանում են գործից, պետք է նախազգուշացնեն 12 որ առաջ: Նախազգուշացումը կատարվելու է վորոշ որերում, վորպիսի որերը վորոշվում են բանկոմի և Վարչության համաձայնությամբ: Այն բանվորներին, որոնք չեն նախազգուշացրել 12 որ առաջ հեռանալու մասին, վերջնական հաշիվը տրվում է վոչ վաղ, քան բանվորների աշխատավարձ ստանալու հերթական որը:

3. ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

51. Վարչությունը իրավունք չունի պահանջել աշխատավորից այնպիսի աշխատանք, որը չի վերաբերում նրա արհեստին: Եթե համապատասխան աշխատանք չլինի, աշխատողին պետք է փոխադրել ուրիշ նման գործի, տալով նրան վարձատրություն համաձայն վերջին աշխատանքի գնահատության, սակայն վոչ պակաս նրա տարիֆային դրույքից: Եթե բանվորին փոխադրում են իր արհեստին բոլորովին անհամապատասխան գործի, վոչ իր վորակի համաձայն, այն դեպքում նա կարող է ստանալ լուծարքի նպաստը և ազատվել գործից:

52. Գործարքով աշխատող բանվորներն իրենց աշխատանքները դեռ չվերջացրած՝ որավարձային աշխատանքի փոխադրվելու դեպքում՝ մանր աշխատանքներ կատարելու համար մինչև նախկին գործարքային աշխատանքի վերադառնալը, որավարձի աշխատանքում

յեղած ժամանակամիջոցի համար վարձատրվում են բրիգադայում յեղած միջին աշխատավարձով:

53. Եթե բանվոր-ծառայողին չինարարական վորևե տեղից փոխադրում են մի ուրիշ վայր աշխատելու, նրանց վճարվելու յեն փոխադրության ծախքերը, բացի այդ պետք է վճարել տեղափոխվելու որերի աշխատավարձը, միջին աշխատավարձի հաշվով:

ա) Եթե բանվորը աշխատել է այնտեղ 5 ամսից ավելի, նրան պետք է վճարել նաև վերադարձի ճանապարհածախսը մինչև իր բնակավայրը, իսկ յեթե Վարչության վորոշմամբ՝ նա վերադառնում է 5 ամիսը չբացած, այդ դեպքում ևս վճարվում է նրա ճանապարհածախսը:

54. Վարչությունը պարտավոր է այն ձեռնարկներում, որ աշխատում են 1000 հոգուց ավելի բանվոր-ծառայողներ, պահել հատուկ պատասխանատու աշխատակից, վորը պետք է զբաղվի միայն բանվոր-ծառայողներ վարձելու, արձակելու, բանվորներին մեկ ցեխից այլ ցեխ փոխադրելու գործով և այլն: Այդպիսի թեկնածությունը նախորոք պետք է համաձայնեցնել բանկոմ-խմբկոմի կամ տեղկոմի հետ:

4. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՅԵՎ ՆՈՐՄԱՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ

55. Բոլոր գործերում կիրառվելու է գործարքային աշխատանքի ձևը, առանց գերարտադրանքի սահմանափակման: Որավարձային աշխատանք թույլատրվում է միայն նորմիրովկայի չենթարկվող աշխատանքներում:

ա) Ակկորդային աշխատանքներ թույլատրվում են բացառիկ դեպքերում, այն էլ Միության կիսությամբ և համաձայնությամբ:

56. Վարչությունը պարտավոր է սույն պայմանագիրը ստորագրելուց մեկ ամսվա ընթացքում մշակել և համաձայնեցնել Միությանն հետ պարզեվատրումների ձևն ու կարգը, ինչպես գործարքով կատարվող, այնպես և այն աշխատանքների համար, որոնք չեն յենթարկվում նորմիրովկուի։ Պարգեվատրումները կատարվում են հետևվյալ դեպքերում,— յերբ նկատվում է արտադրության որակի բարձրացում, բրակի իջեցում, նյութերի և հումքի խնայողաբար գործադրումը, պարապուրդների տոկոսների իջեցումը, տրված աշխատանքների լավագույն կատարման ցուցանիշներ և այլն։

57. Առանձին աշխատանքների վարձատրությունը կատարվում է Միության հետ համաձայնեցված, մի-ացյալ շրջանային գնացուցակների համաձայն, որպիսի գնացուցակը պարտադիր է աշխատանքների նորմալ պայմաններում և համապատասխան որակի շինանյութեր ունենալու դեպքում (Հավելված .....)։

ա) Գնացուցակներից զատ հարգելի պատճառներով հեղումներ կատարելը արգելվում է։

58. Միասնական նորմաներով չնախատեսված արտադրության պայմանների բացակայության դեպքում, յերբ հնարավոր չե գնահատել աշխատանքը կամ փոխել վերջինիս վերաբերող այն պայմանները, որոնք ազդում են աշխատանքի վրա՝ ցածրացնելով նրա գնահատությունը,— այդպիսին որոշվում է ԳԿՀ-ի կողմից։

59. ԳԿՀ-ն քննության է առնում և գնահատում նաև այն աշխատանքները, որոնք ձեռնարկության մեջ երբեմն նորություն են կիրառվում և ստեղծում են աշխատանքին հատուկ պայմաններ, որինակ, գործի այս կամ այն ռացիոնալացումը կամ կազմակերպչական-

տեխնիկական բարելավումը և այլն, — որոնք ընդունակ են բանվորի աշխատավարձը բարձրացնելու։

ա) Բոլոր նման դեպքերում Վարչությունը պետք է ստուգի գնացուցակում կատարվող բոլոր փոփոխությունները, իսկ ԳԿՀ-ն իր հերթին պետք է արձանագրի այն պատճառները, որոնց հետևանքով կատարվել է գնացուցակների իջեցումը կամ ավելացումը։

բ) ԳԿՀ-ի կատարած ընդհանուր փոփոխությունները վերաբերվելու յեն միմիայն տվյալ աշխատանքին և ոչ թե ամբողջ շինարարության։

գ) ԳԿՀ-ի կատարած գնացուցակի փոփոխությունները կարող են տարածվել նաև բոլոր մյուս շինարարությունների վրա, յեթե ԳԿՀ-ն կազմված լինի միջ-գերատեսչական կարգով (ամեն մեծ շինարարության և միության ներկայացուցիչների մասնակցությամբ)։

դ) Աշխատանքներում առաջացած բոլոր աննորմալությունների մասին բանվորները պարտավոր են հայտնել Վարչությանը, որը այդ մասին կազմում է արձանագրություն։

60. Վարչությունը և Միությունը հավասար չափով պատասխանատու յեն այն գնացուցակների ճիշտ կիրառման և չեղումների համար, որոնք կազմված են հատկապես շինարարության և շինանյութեր արտադրող ձեռնարկությունների համար։

ա) Միութենական կազմակերպությունները, սույն պայմանագրի համաձայն, պարտավոր են՝ իրենց վրա վերցնել Պայմանագրի ճիշտ կիրառման պարբերական հսկողությունը, գնացուցակների կիրառումը շինարարություններում, մանավանդ բացառիկ աշխատանքներ, բանվորական մասսաների մեջ՝ գնացուցակների նշանակության մասին և տեխնիկական նորմիրովկայի կատա-

բած դերի ու դիսցիպլինայի մասին կենտրոնացնել բանվորների ուշադրությունը և ժամանակությունը տեխնիկական նորմիրովկայի գործը ավելի ուժեղացնելու. ձեռնհաս և համապատասխան բանվորների առաջքաշումը, հատկապես հարվածայիններին, հեշտացնելու, լրացնելու տեխ. նորմիրովկայի աշխատողների թիվը, իր ժամանակին ուղղիկացնելու վերաբաս մարմիններին և Աշխատանքի Վարչության պատահաով տեղի ունեցած գնացուցակների խախտումների մասին, և միջոցներ ձեռք առնել գնացուցակների դիսցիպլինան ամուր հիմքերի վրա դնելու.

բ) Աշխատանքի արտադրողականության լրիվ հաշվեառվությունը պահանջել չին. որպաններից, ապահովել հսկողությունը և իր ժամանակությունը այն խնդրում: Միջոցներ ձեռք առնել անմիջապես կանխելու չենարարության մեջ առաջացած ընդմիջումները, որոնք կասեցնում են արտադրության ընթացքը աշխատանքի բոլոր բնագավառներում: Միաժամանակ պարբերաբար ուսումնասիրել աշխատավարձի սահմանված նորմաները և ուսումնասիրության արդյունքները ոգտագործել, հետագայում աշխատավարձի խնդիրները կարգավորելու համար:

61. Աշխատանքների միացյալ գնացուցակներում չնախատեսված աշխատանքի գները մշակվում են Վարչության կողմից, յենելով ավյալ աշխատանքների բնույթից, բանվորների միջին աշխատավարձից և արտադրանքի նորմաներից:

62. Համամիութենական միասնական նորմաներում չնախատեսված արտադրական նորմաները (нормы выработки) և նրանց կարգը սահմանվում են ըստ աշխատանքների բնույթի և վոչ թե աշխատանքը կատարող անձի կարգի. նորմաների չափը սահմանվում է լավագույն բանվորների արտադրանքի հիման վրա, համաձայն կատարված խրոնոմետրաժի տվյալների:

63. Յեթե աշխատանքի գոյություն ունեցող պայմանները այնպես են դասավորված, վոր ամենալավ բանվորը ինտենսիվ աշխատելու դեպքում ևս չի կարողանում արդարացնել աշխատավարձի սահմանված նորման, այդ դեպքում նորմաները չեն փոփոխվում, այլ ստուգվելուց հետո ԳԿՀ-ի վորոշմամբ բարձրացվում են գները: Բարձրացված գնացուցակները պահպանում են իրենց գոյությունը այնքան ժամանակ, վորքան ժամանակ կչարունակվեն հիշված առանձնահատուկ պայմանները: Գնացուցակների ամեն մի նման բարձրացում պետք է կատարել տեղում, նախորոք հարցը քննելուց հետո: Յեթե աշխատանքի պայմանները նորմալ են և բանվորը չի կարողանում արդարացնել իր նորման, այդ դեպքում գնացուցակների բարձրացում չի կատարվում:

64. Յեթե աշխատանքի տեխնիկական կազմակերպչական պայմանները բարեփոխվում են և աշխատանքի արտադրողականությունը սկսում է բարձրանալ՝ անկախ բանվորի աշխատանքի պայմաններից, աշխատավարձի նարյադները և նորմաները վերամշակվում են ԳԿՀ-ի միջոցով 6 որվա ընթացքում, իսկ առանձին բարդությունների դեպքում— 12 որվա ընթացքում:

65. Յեթե բանվորի ձեռներեցությամբ վորևէ աշխատանքի մեջ բարեփոխություն և մտնում, վորով բարձրանում է արտադրողականությունը, գնացուցակի նորման այդ բանվորի վերաբերմամբ յենթարկվում է փոփոխության և բանվորին տրվում է, բացի փոխհատուցումից, նաև վերջին յերեք ամիսների համար նոր գնացուցակի տարբերությունը, անկախ նրանից, թե

տվյալ բանվորը անհատապես թե բրիգադայի մեջ և աշխատում:

66· Այն դեպքում, երբ աշխատանքները կատարվում են կոլեկտիվ կերպով (հարվածային բրիգադներ, արտադրական կոլեկտիվներ և այլն), վարձատրության ընդհանուր նորմաները վորոշվում են աշխատանքի բնույթի և կատարման ձևի համաձայն, հարտարարելով այդ մասին բանվորներին:

67· Հարմարություններ ստեղծելու, աշխատավայրը կարգավորելու և գործիքներ պատրաստելու համար Վարչության գլուխությամբ և կարգադրությամբ կորցրած ժամանակի աշխատանքի վարձատրությունը հաշվվելու է ստանձին, անկախ գործարքից, իբրև ինքնուրույն աշխատանք, համաձայն մինչին աշխատավարձի:

68· Նորմաների և գնացուցակների ատթիվ Վարչության և բանվորների մեջ հարուցված կոնֆլիկտները լուծվում են ԳԿՀ-ի կողմից: Մինչև կոնֆլիկտների լուծվելը, բանվորները իրավունք չունեն հրաժարվելու աշխատանքից, եթե նույնիսկ նրանք համաձայն էլ չը լինեն տվյալ գնացուցակով աշխատելու:

Ծանոթություն.—Այն աշխատանքների համար, վոր բանվորը կատարել է վարձատրության մասին կոնֆլիկտ հարուցելու ժամանակամիջոցում,—սկսած ԳԿՀ-ին դիմում տալու օրից,—վճարվելու են համաձայն ԳԿՀ-ի վորոշման, սակայն վոչ պակաս. քան գործը հանձնելու օրը գործադրված գործից: ԳԿՀ-ի վորոշումից հետո, նույնպիսի աշխատանքները վարձատրվելու են համաձայն ԳԿՀ-ի վորոշման, թեկուզ նույնիսկ այդ վորոշմամբ ավելի ցածր վարձ հասնի բանվորին, քան թե վարչությունը սահմանել է աշխատանքը հանձնելիս:

69· Գործարքով աշխատող այն բանվորներին, վորոնք նշանակվում են նոր ստացված մեքենաները, ստանոցները կամ նյութը փորձելու, այդ փորձի ժամանակամիջոցում վճարվելու է նրանց մինչին աշխատավարձից վոչ պակաս:

70· Բանվորին գործարքով աշխատանք հանձնելու դեպքում, Վարչությունը պարտավոր է նախորոք բացատրել գործի բնույթը, չափը, գնահատությունը և աշխատանքի ժամանակի տևողությունը, վորպիսիք պահանջում է գործը:

ա) Եթե տրված աշխատանքի գները գնացուցակով նախատեսված չեն լինել, գները վորոշվելու են ԳԿՀ-ի կողմից:

Ծանոթություն.—Բանվորները իրավունք չունեն հրաժարվելու տրված գործից, սակայն այդ հանգամանքը չի արգելում նրանց բողոքել ԳԿՀ-ի վորոշման դեմ:

71· Կատուցողների Արհմիության Կենտկոմի մշակած տարիֆային տեղեկագրի համաձայն, պետք է վարձել բանվորի կատեգորիան, թե անհատապես և թե բրիգադայի մեջ աշխատելու դեպքում, վոչ ուշ քան նրա ընդունվելու 7-րդ օրը, հատուցվող աշխատանքի վորակի և վոչ թե աշխատանքի կատարող անձի վորակի:

Զի թույլատրվում բանվորի կատեգորյան վորոշել բրիգադայի հայեցողությամբ: Եթե վարչությունը 7 օրվա ընթացքում չի վորոշել նրա կատեգորիան, այդ դեպքում մինչև բանվորի կատեգորիայի վորոշումը նա վարձատրվելու է վարձատրությունն այն չափով, ինչ չափով նախկին աշխատավայրում ստացել է:

72· Աշխատանքի հանձնումը և չափելը անպայմանորեն կատարվելու է բրիգադայի ներկայացուցչի

մասնակցությամբ: Զսպելու և հանձնելու համար դոր-ծադրված ժամանակամիջոցի մասին պետք է հիշատակել ստացողական-հանձնողական արձանագրության մեջ և այդ ժամանակի համար տնտեսական մարմինը վճարելու յե մասնակցողին միջին աշխատավարձի չափով:

Հանձնման արձանագրությունը ստորագրվում է յերկու կողմից ևս: Կատարված աշխատանքի արձանագրված հաշվի պատճենը տրվելու յե բրիգադայի ներկայացուցչին, առաջին իսկ պահանջի դեպքում:

73. Աշխատավարձի տարիֆ-դրույքի 1 կարգը սահմանվում է՝

ա) Բանվորների համար 1 ռուբլի 72 կոպ., իսկ առաջին կարգի աշակերտների համար- 1 ռուբ. 12 կոպ.:

74. Աշխատավարձի բաշխումը կատարվում է հետևյալ տարիֆային ցանցով.

Բանվորների կարգը	Փոխհարաբերությունը	Տարիֆը	Աշակերտի կարգը	Փոխհարաբերությունը	Տարիֆը
1	1,0	1,72	1	1,0	1,12
2	1,25	2,15	1	1,30	1,46
3	1,45	2,50	3	1,60	1,79
4	1,60	2,75	4	1,90	2,13
5	1,80	3,10			
6	2,10	3,60			
7	2,5	4,30			

Ծանոթություն.— 1. Աշակերտները աշակերտական ցանցով տարիֆիկացիայի յեն յենթարկվում միայն 2 տարվա ուսման ընթացքում: Սովորելու տեվողությունը 3 տարի լինելու դեպքում վերջին տարում վճարումը կատարվելու յե ընդհանուր բանվորական ցանցի համաձայն, այն հաշվով, որպեսզի վերջին կիսամյա-

կում ստանա մի կարգով ցած այն արհեստի կարգից, որով նա զբաղվելու յե դպրոցը ավարտելուց հետո, բայց վոչ պակաս այն աշխատավարձից, որը ստացել է Շինասում:

Ծանոթություն.— 2. Բոլոր շենքերում և վարչություններում աշխատող ծառայողների համար սահմանվում է ամսական աշխատավարձ, պաշտոնական դրույքների ձևով:

75. Վարչությունը պարտավոր է գոյություն ունեցող խմբակների փոխարեն կազմակերպել՝ միևնույն արհեստի բանվորներին՝ բրիգադների ձևով, բրիգադիրների ղեկավարությամբ: Բրիգադիրները նշանակվում են Վարչության կողմից:

ա) Բրիգադները պարտավոր են աշխատել բրիգադայի մյուս անդամների հետ հավասար: Բրիգադիրների աշխատավարձը վճարվում է համաձայն նրանց համար վորոշված կարգի: Վարչությունը պետք է նշանակի բրիգադիրներին լավագույն բանվորներից, սոցմրցման մասնակցողներից և արտադրության բարձրացման համար արժեքավոր առաջարկություններ անողներից կամ գյուտարարներից: Մեծ խմբերում,— վոչ պակաս 40 բանվոր ունեցող խմբերում,— նշանակվելու յեն ազատ բրիգադիրներ, վորոնք վարձատրվելու յեն Վարչության հաշվին կրտսեր տասնապետների հաշվով, սակայն վոչ պակաս նրանց նախկին միջին աշխատավարձից, վորպիսին մինչև ազատվելն ստացել է բրիգադայում:

բ) Այն բրիգադները, վորոնք կազմված են Կենտր. Աշխատանքի Ինստիտուտի դասընթացները (ՑԻՏ) ավարտողներից ավարտելուց հետո, յերեք ամիս շարունակ, պետք է աշխատեն Վարչության կողմից նշանակված առանձին հրահանգչի ղեկավարությամբ, վարձատրելով վերջիններիս վորպես կրտսեր տեխնիկական պերսոնալի: Յերեք ամիս լրանալուց հետո Վարչու-

թյունը նշանակում է բրիգադայի միջից մեկին իբրև գլխավոր բրիգադիր, իսկ հրահանգին նշանակում է նոր ավարտած ցիտովցիների նոր խմբակների գլխավոր:

76. Աշխատավարձը վճարվելու է ամսական 7 անգամ, գլխագանձերով, համաձայնության գալով տեղկոմի հետ, բայց վորում առաջին երկու գլխագայի համար արվելու է ավանս, որավարձի գրասյուի հաշվով, իսկ 3-րդ գլխագայի աշխատավարձը վճարելիս վերջնական հաշվի ձևով ամբողջ ամսվա համար, համաձայն կատարած աշխատանքների (գլխավորապես վերջացված աշխատանքների նկատմամբ):

77. Յեթե աշխատողի հանդստի որը զուգադիպում է աշխատավարձ վճարելու որվա հետ, այդ դեպքերում նրանց աշխատավարձը պետք է արվի հանդստյան որվա նախորյակին: Աշխատավարձը պետք է վճարել աշխատանքի ժամերին և աշխատանքի վայրում, ամեն մեկին առանձին-առանձին, աշխատավարձի գուցակներով:

ա) Բրիգադաներին, կոլեկտիվներին և արտադրական կոմմունաներին աշխատավարձ արվում է կոլեկտիվ ձևով: Այդ ձևով վճարելը պետք է լինի աշխատողների ցանկությամբ, կամավոր բերդով, ամեն մեկի առանձին համաձայնությամբ: Վարչությունը պարտավոր է ամեն դեպքում հաշվառում կատարել թե աշխատանքի և թե աշխատավարձի վերաբերմամբ:

78. Վարչությունը պարտավոր է արամադրել բանվորներին համապատասխան գործիքներ և չինանյութեր: Սեփական գործիքներ չունենալու պատճառով գործի չընդունելը արգելվում է: Յեթե բանվորը աշխատում է իր սեփական գործիքներով, Վարչությունը պարտավոր է, բացի աշխատավարձից, վճարել նաև գործիքը

նեերը մաշվելու համար դրամական փոխհատուցում: Փոխհատուցումը վճարվելու է ամեն յերեք ամիսը մեկ անգամ, համաձայն որան կցված ցուցակների (հավելված №...):

9. ԲՐԱԿՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՐԱՊՈՒՐԴՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

79. Սահմանված աշխատավարձով բանվորը պարտավոր է կատարել լավ վարակի աշխատանք. վատ վարակի աշխատանքը, վորը առաջացել է բանվորի մեղքով, նա պարտավոր է նորից վերաշինել առանց առանձին վարձի. կամ այդպիսին վարձատրվում է ցածր գներով համապատասխան աշխատանքների թերությունների:

ա) Յեթե Վարչությունից ստացված վատ գործիքներ կամ չինանյութեր հայտաբերվելու պատճառով գործը փչանում կամ տուժում է, բանվորը անմիջապես պետք է հայտնի Վարչությանը:

բ) Վարչա-տեխնիկական անձինք, իրենց սխալ կարգադրությամբ, յերբ պատճառ են դառնում անվորակ և վատ աշխատանք առաջանալուն, անձնապես նյութական պատասխանատվության են յենթարկվում պատճառած վնասի համար, բացառությամբ այն դեպքերից, յերբ տեխնիկական անվտանգության պահպանման համար և արված կարգադրությունը, կամ կապված է այն վորոշ վտանգի հետ:

գ) Նման դեպքերում աշխատանքի այն մասը, վորը անվորակ կճանաչվի, վարձատրվելու է սահմանված հատուկ ցուցակներով (Հավելված №...):

դ) Առանց Վարչության կարգադրության անվորակ աշխատանք կատարելու և չինանյութերը փչացնելու

դեպքում, վնասները պահանջվելու են համաձայն տույժերի ցուցակների:

Ե) Յեթե բանվորի հանցանքով փչացրած աշխատանքը նորից ոչտապարժվում և ձեռնարկության կողմից երբեմ արժեքավոր աշխատանք, այդպիսին վճարվելու է իջեցված գնահատությամբ, հակառակ դեպքում համաձայն ԳԿՀ վորոշման:

Նյութը փչացնելու վնասը պահանջվում է հետզհետե և դանձվում է փչացնողից, ամեն անգամ վոչ ավելի նրա տարիֆ-դրույքի 1/3-ի չափից:

80. Բանվորի կամ բանվորների խմբի անփույթ վերաբերմունքի կամ տեխնիկական ներքին կանոնների խախտման կամ Վարչության կարգադրությունները չկատարելու հետևանքով առաջացած վնասների և դիտավորյալ ձևով աշխատանքը չկատարելու դեպքում, աշխատանքի վարձը չի վճարվում և հանցավորներին գործից հեռացնում են առանց լուծարքային նպաստի:

81. Աշխատավորը պարտավոր է անմիջապես հայտնել Վարչությանը և տեղկոմին պրոստոյի մասին. բացի այդ, իրենից կախված բոլոր հնարավոր միջոցները պետք է գործ դնի և նախադրությունների Վարչությանը՝ առաջ գալիք պրոստոյը կանխելու: Հակառակ դեպքում պրոստոյի համար չի վճարվում և բանվորը պետք է յենթարկվի պատասխանատվության համաձայն տույժերի ցուցակի:

82. Վարչությունը պարտավոր է միջոցներ ձեռք առնել պրոստոյները կանխելու, հակառակ դեպքում, յերբ անխուսափելի յե, պարտավոր է բանվորների փոխադրել ուրիշ աշխատանքի:

83. Վարչության պատճառով առաջացած պրոստոյների համար (յերբ անխուսափելի չե— կամ ժամանակին կարգադրություն չի արված) հանցավորները յենթարկվում են պատասխանատվության և բացի այդ՝ վճարում են իրենց անփութությունից առաջացած բոլոր վնասները:

84. Պարապուրդների դեպքում վճարվում է՝

ա) 3 որից վոչ ավելի համար մինչև աշխատավարձի չափով,

բ) 3 որից ավելի դեպքում— տարիֆային դրույքով, հաշվելով այն պրոստոյի սկսվելու թոպեից:

85. Վատ յեղանակներին (անձրևի և այլ մթնոլորտային տեղումների և յերևույթների դեպքերում) յերբ բացօթյա աշխատանքը անհնար է լինում, Վարչությանը իրավունք է վերապահվում փոխադրել բանվորներին ծածկի տակ և տալ նրանց, համաձայն իրենց վորակի, աշխատանք, ու վճարել ավյալ աշխատանքի համար գնացուցակով, սակայն վոչ պակաս տարիֆային դրույքից:

86. Ծածկի տակ փոխադրելու և այնպիսի աշխատանք հանձնելու դեպքում, վորը չի համապատասխանում բանվորի վորակին, վճարվելու է մինչև աշխատավարձի հաշվով:

87. Ծածկի տակ աշխատանք տալը հնարավոր չլինելու դեպքում, Վարչությունը վճարելու է բանվորներին չաշխատած որերի վարձը համաձայն տարիֆային դրույքի:

Ծանոթություն.—Աշխատանքը չորոնակվելու անհնար լինելը վորոշում է Վարչությունը համապատասխան արձանագրությամբ:

6. ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

88. Պարգևատրվում են այն բոլոր բանվորները, որոնք քանակական և որակական ցուցանիշներով լրիվ կատարում են իրենց հանձնարարված աշխատանքի նորման:

89. Պարգևատրման չափը կախված է կատարած աշխատանքի քանակից, որակից և ոնտեսումից:

90. Պարգևատրման ֆակտորներն են հետևյալ ցուցանիշները՝

ա) Առանձին միավորներում շինանյութերի ծախսման մեջ ոնտեսում մտցնելը.

բ) Գրասայների տակոսի իջեցումը.

գ) Բրակի իջեցումը.

դ) Արտադրանքի որակի լավացումը:

Ծանոթություն.—1. Վարչությունը պարտավոր է, թված ցուցանիշների համաձայն, յուրաքանչյուր յերեք ամիսը մեկ կիրառել պարգևատրման կարգը:

Ծանոթություն.—2. Վարչությունը պարտավոր է լավ աշակերտներին պարգևատրել դարձնական աշխատանքներում, առաջադիմելու համար,—արտադրության մեջ աշխատելիս՝ որակի և քանակի ցուցանիշների լրիվ նորման կատարելու դեպքում, լավ կարգապահության, դյուտարարության և արժեքավոր առաջարկների համար:

7. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

91. Վարչությունը պարտավոր է քննության առնել արտադրական խորհրդակցության և անհատ բանվորների առաջարկները և 3 որվա ընթացքում հայտնել առաջարկի հեղինակներին վորոշման հետևանքը:

92. Վարչությունը ռացիոնալացման հատուկ նպատակների համար առանձնացնում է 2500 ռուբ. և մի

ամսվա ընթացքում, վորոշում, թե չենքի վոր աշխատանքների համար ինչքան է հարկ համարում ծախսել պրանից:

93. Վարչությունը պարտավոր է հենց առաջին ամսվա ընթացքում մշակել և համաձայնեցնել դարձարկոմ-բանկոմի հետ հարմածայինների և ստրմրցման մասնակցողների աշխատանքի հաշվառման ձևը, վորպեսզի հնարավոր լինի այդպիսի հաշվառումը կիրառել 1931 թ. վոչ ուշ, քան մայիս ամսից սկսած:

94. Դյուտարարների վորակը բարձրացնելու համար Վարչությունը պարտավոր է հիմնել և կահավորել մինչև մարտ ամիսը դյուտարարների անկյուն, բացի այդ Վարչությունը պարտավոր է տեխնիկական և կազմակերպչական ոժանդակություն ցույց տալ դյուտարարներին:

8. ԱՐՏԱԺԱՄՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ, ՀԱՆԳՍՏԻ (ԱՐՁԱԿՈՒՐԴԻ) ՅԵՎ ԱՐՏՀԱԳՈՒՍՏԻ ՄԱՍԻՆ

95. Ընդհանրապես արտաժամյա աշխատանքները կատարելը և հանդստի որերին աշխատելը չի թույլատրվում:

Ծանոթություն.—Իրրև բացառություն, անհրաժեշտ դեպքերում թույլ է տրվում արտաժամյա աշխատանք, սակայն նախորոք համաձայնություն կայացնելով Վարչության և Միության մեջ ու ստանալով Աշխատողկոմատի թույլտվությունը՝ այդ առթիվ:

96. Արտաժամյա աշխատանքները վարձատրվում է հետևյալ ձևով.

ա) Գործարքով և որավարձով աշխատողները արտաժամյա աշխատելու դեպքում ստանում են՝ ամեն մի առաջին յերկու ժամի համար 1¼ ժամ (իրենց տա-

բիֆային դրույքով), իսկ հետեվյալ ժամերի համար ամեն մի ժամին մեկ ու կես ժամվա՝ նույնպես տարբիֆային դրույքի աշխատավարձի չափով:

ը) Նորմայի չենթարկված աշխատավորները՝ յերկարատեվ (մի շաբաթից վոչ պակաս) աշխատելու դեպքում ստանալու յեն լրացուցիչ պարգեվատրում համեմատական չափով,— ըստ իրենց աշխատած ժամանակի:

զ) Բացառիկ դեպքերում, յերբ աշխատավորը հնարավորություն չի ունենում իր հանգստի որը հանգստանալու, նրան թույլատրվելու յե առաջիկա 12 որերից մեկում մի որ ավելի հանգստանալ:

Ծանոթություն.—Աշակերտներին վոչ մի դեպքում չի թույլատրվում արտաժամյա աշխատանքներ տալ և հանգստի որերը աշխատեցնել:

97. Չչափավորված բանվորական որ ունեցող աշխատավորների ցուցակը կցվում է սույնին (հավելված №...).

ա) Վարչությունը պարտավոր է մի ամսվա ընթացքում կազմել և համաձայնեցնել բանկոմի հետ՝ չչափավորված բանվորական որ ունեցող աշխատավորների վերաբերյալ աշխատանքի կանոնները:

98. Յերկու շաբաթվա (12 բանվորական որ) արձակուրդի հարցը նոր ընդունված բանվորների կողմից կարող է հարուցվել Վարչության առաջ միայն 11 ամիս անընդհատ աշխատելուց հետո:

99. Բանվորական տարին հաշվելու յե՝ տվյալ Վարչության մոտ՝ ընդունված որից սկսած 12 ամիս աշխատելուց հետո:

100 Յերկրորդ անգամ արձակուրդ ստանալու հարցը կարելի յե հարուցել նախկին բանվորական տարում աշխատելուց հետո ևս 5 և կես ամիս լրիվ տվյալ Վարչության մոտ աշխատանքը շարունակելուց հետո:

101. Արձակուրդը, վորպես որենք, տրվում է որացուցային տարվա սկզբին կամ վերջին, իսկ աշակերտներին տրվում է անպայման ամառվա ամիսներում: Առանձին դեպքերում կարելի յե տալ նաև տարվա ընթացքում, յեթե աշխատանքի բնույթը թույլ և տալիս արձակուրդ դնալու:

Ծանոթություն.—Յեթե վարչությունը փոխադրում է աշխատավորին ուրիշ աշխատավայր կամ Աշխատգիտամասի կարգադրությամբ և նա փոխադրվում այլ անտամարմնի մոտ աշխատելու, աշխատանքի սատմը, վորը արձակուրդի իրավունք և տալիս, չի ընդհատվում:

102. Վարչության կողմից արձակվողները կամ իրենց կամքով աշխատանքից հեռացողները՝ 11 ամսից պակաս աշխատած լինելու դեպքում՝ ստանալու յեն արձակուրդի փոխհատուցում իրենց ստացած աշխատավարձի $^{1}/_{26}$ չափով (4 տոկոս) տվյալ Վարչության մոտ իրենց աշխատած ամբողջ ժամանակի համար, սակայն այն հաշվով, վոր տրված դումարը չգերազանցի նրանց միջին աշխատավարձի 12 որվա հաշվից:

103. Այն աշխատավորները, վորոնք յերկրորդ աշխատանքի տարում, նույն Վարչության մոտ, 5 ամիս աշխատելուց հետո հեռացվում են (համաձայն Աշխատենպրքի 47-րդ հոդվածի «Ա» և «Բ» կետերի), ինչպես և նրանք, վորոնք կկանչվեն զինվորական ծառայության, կամ կդրաժուզվեն ստորերու, ստանալու յեն արձակուրդի փոխարեն դրամական փոխհատուցում 12 որվա միջին աշխատավարձի չափով:

104. *Այն աշխատավորները, որոնք աշխատել են* 5 *ու կես—*11 *ամիս և հեռացվում են բացի վերև հիշված պատճառներից այլ պատճառներով (ինչպես և իրենց կամքով հեռացողները), նաև նրանք, որոնք* 5 *ամսից պակաս են աշխատել, անկախ հեռացման պատճառներից, ստանալու են երբեմ արձակուրդի փոխհատուցում՝ ամեն մի աշխատած ամսի համար՝ մի որվա արձակուրդ (նույնպես* 4 *տակոս)*:

105. Անչափահասները նույն Վարչության մոտ 5 *և կես ամիս աշխատելուց հետո ձեռք են բերում* մեկ ամսվա արձակուրդի իրավունք, *ամբողջ տարվա համար. չոգտագործած արձակուրդի դիմաց* անչափահասներին դրամական փոխհատուցում է տրվում *նրանց վճարված ամբողջ* աշխատավարձի $^{2}/_{25}$-ի չափով (8 տակոս):

106. Չափահաս դառնալու դեպքում, *եթե նրանք հերթական արձակուրդ չեն ստացել, արձակուրդ տրվելու են բացի սահմանված յերկու շաբաթից, նաև լրացուցիչ՝* ամեն մի ծառայած ամսի համար՝ մեկական որ, *հաշվելով այդ մինչև չափահաս դառնալու որը անցած ամբողջ ժամանակի համար*:

Ծանոթություն.—1. *Վոչ նորմալով, այսինքն չչափավորված բանվորական որ ունեցող աշխատավորներին տրվելու են լրացուցիչ արձակուրդ, համաձայն սույն պայմանագրին կցված ցուցակի (հավելված № .....)*:

Ծանոթություն.—2. Յերկու տարի անընդհատ աշխատող բանվորները *հաշվելով* 1930 *թ. նոյեմբերի* 1-*ից, որոնք աշխատել են շինանյութ արտադրող բաժնում, ստանալու են, բացի որենքով սահմանվածից, նաև* լրացուցիչ արձակուրդ 3 *բանվորական որ, կամ փոխհատուցում* 3 *որվա աշխատավարձ*:

Ծանոթություն.—3. *Այն բանվորները և տեխնիկական պերսոնալը, որոնք լավագույն աշխատողներ են արտադրության մեջ (հարվածայիններ և սոցմրցման մասնակիցներ), որոնք յերկար ժամանակ աշխատել են տվյալ հիմնարկ-ձեռնարկություններում և լավ վարակի աշխատանք են կատարել, արտադրական խորհրդակցություններում արժեքավոր առաջարկներ են մտցրել կամ դյուտարարության մեջ աչքի յեն ընկել,* առաջին հերթին ուղարկելով *տեխնիկ. ԲՈՒՀ-երը սովորելու, հանդիսության տները, կուրսորտները, դարձուցվել են արտասահման վարակավորվելու և առաջին հերթին նրանք պետք է* ոգտվեն *դեֆիցիտային ապրանքներից, և այլն*:

Ծանոթություն.—4. *Անչափահասներին, որոնք աշխատում են վնասակար և ծանր՝ որենքով նախատեսված գործերում, տրվելու յե* լրացուցիչ արձակուրդ յերկու շաբաթով:

107. Տեխնիկական պերսոնալի արձակուրդ գնալու կարգը *սահմանվում է Վարչության կողմից, նախապես համաձայնության գալով գործարկոմի և Ճ. Տ. Ս.-ի հետ հետևյալ ձևով՝*

ա) Չչափավորված բանվորական որ ունեցող հարատարապես-տեխնիկ աշխատավորների համար սահմանվում է տարեկան յերեք շաբաթից մինչև մեկ ամիս արձակուրդ *(յելնելով նրանց աշխատանքի ծանրաբեռնությունից, ըստ սույնին կցված պաշտոնների ցուցակի,— հավելված №...)*:

բ) Ցեխի պետը, վարպետը և նրանք, որոնք աշխատում են առողջության համար աշխատանքի վատնդավոր պայմաններում, ստանում են ցեխի բանվորների հետ հավասար իրավունքներով, բացի արձակուրդից, և հեղոքացնող նյութերը:

108. 1931 *թ. արդիֆիցիրանով նախատեսված աշխատանքի պաշտպանության վարկի սահմաններում, Վարչությունը պարտավոր է կատարել տեխնիկական*

անվտանգության, սանիտարական և աշխատանքի առողջապահության բոլոր ձեռնարկումները, համաձայն Աշխատության և զբաղվածության Վարչության և շինհիմնարկի միջև համաձայնեցված և սահմանված կարգի:

ա) Վարչությունը պարտավոր է նաև մինչ 1931 թ. մայիս ամսի 1-ը հորդորել, իսկ եթե դրություն չունի—կատուցել ինչպես բաղնիքում՝ դուշեր՝ անմաքուր գործերում աշխատողների համար:

բ) Մինչ 1931 թ. մարտ ամսի 1-ը պատրաստել լվացարանները, ցեռացրած ջրի հարմարություններ և զգեստների պահարաններ:

գ) Պարտավորվում է նաև սահմանվելուց հետո մինչև 15 որը ամեն մի բանվորին 2-ական, իսկ ծառայողներին մեկական հատ սրբիչներ տրամադրել 1,25 մետր լայնության:

Նշանություն.—Վարչությունը պարտավոր է լվացարանների մոտ ունենալ սոսա, կամ այդպիսին բաժանել բանվորներին:

109. Վարչությունը պարտավոր է մինչև մարտի 1-ը շինարարության կից հիմնել բժշկական առաջին ոգնության կայան (առանձին շենքում) և կահավորել այդպիսին համապատասխան ինվենտարով: Բացի այդ, ունենալ փոխադրական միջոց, գժբախտ դեպքերի ժամանակ վիրավորներին կամ հիվանդներին կայանից կամ հանրակացարաններից ամբուլատորիա կամ հիվանդանոց փոխադրելու համար:

բ) Վարչությունը պարտավոր է մինչև մարտ ամիսը կազմակերպել բոլոր ցեխերում դեղատուփեր անհրաժեշտ դեղորայքով, հիվանդին շտապ բժշկական ոգնություն հասցնելու համար:

110. Վարչությունը՝ աշխատանքները սկսվելուն պես՝ պարտավոր է ապահովել իր պահանջով այլ տեղերից բերել ոտաբ բանվորներին բնակարանով (հանրակացարանով), փորպիսիք կահավորվելու են՝ սեղաններով, պահարաններով, մատրացներով, բարձերով, լվացարաններով:

ա) Հնարավորություն է տրվում պարբերաբար մաքրելու, հատակը լվանալու և ախտահանելու (միջատների բազմանալը կանխելու համար),— սանիտարական և առողջապահական բոլոր հարմարություններով:

բ) Վարչությունը և գրասենյակությունը պարտավոր են խրախուսել յերիտասարդ բանվորության ձեռներեցությունը որինակելի ցուցադրական հանրակացարաններ և կենցաղային կոմունաներ կազմակերպելու ընդդեմ:

Նշանություն.—Վարչության պատկանող բնակարանների բաշխումը կատարվելու է Վարչության և գործարան-բանկոմի փոխադարձ համաձայնությամբ, ըստ փորում բնակարաններ առաջին հերթին տրվելու են հարվածային բանվորներին, յերկար ժամանակ ավյալ շինարարությունում աշխատողներին և նրանց, վորոնք ընդհատակյա կարգով աշխատելու են մինչև 5-ամսվա վերջը:

111. Նրանց, վորոնց Վարչությունը պարտադրում է ապրել շինարարության սահմաններում, բնակարան տրվում է ձրի (կցվում է ձրի բնակարան ստանալու իրավունքից զատ պաշտոնյաների ցուցակին, հավելված №...):

112. Բրենց կամքով գնացողները կամ նրանց կանոնների խախտման պատճառով հեռացվածները պարտավոր են 5 որվա ընթացքում ազատել բնակարանը:

Ծանոթություն.—1. Այն աշխատավորները, որոնց թնամբի տակ ապրում են անչափահասներ կամ ծերացածներ, 3 սրվա փոխարեն իրավունք ունեն 15 օրից հետո ապատելու բնակարանը:

Ծանոթություն.—2. Սույն միջոցի կիրառումը չի վերաբերվում նրանց, որոնց բնանիքի կերակրողը դժբախտ պատահարից մեռել է. նման դեպքերում թույլ է տրվում դրպեցնել բնակարանը մինչեվ յեռեք ամիս:

113. Վարչությունը պարտավոր է բաց թողնել 2000 ռուբ. փարկ մուրհակով բանջարանոցներ, խոզաբուծություն կազմակերպելու համար (համապատասխան կազմակերպիչ մարմիններին):

114. Շինարարության և արդյունաբերության մեջ աշխատող բանվոր-ծառայողներին արտհագուստ տրվելու յե համաձայն սրան կցված ցուցակի (հավելված №...):

115. Արտհագուստը ձեռնարկության սեփականությունն է, նույնիսկ մաշվելու դեպքում պետք է վերադարձնել: Գործից հեռացվելու ժամանակ բանվորը պարտավոր է վերադարձնել արտհագուստը: Մինչև հին արտհագուստը չվերադարձվի, նորը չի տրվելու:

116. Արտհագուստ յուրացնողները յենթարկվում են պատասխանատվության և արժեքը նրանցից գանձվելու յե ապատ շուկայի գներով. այդ մասին առաջ յեկած վեճերը քննվելու յեն ԳԿՀ-ի միջոցով:

117. Մեծ շինարարություններում և գործարաններում Վարչությունը պարտավոր է ունենալ առանձին շենքեր արտհագուստը և գործիքները պահելու համար: Պարտավոր է նաև կազմակերպել վառնամանների նորոգելու արհեստանոցներ:

Ծանոթություն.—Աշակերտներն ստանալու յեն արտհագուստ չափահաս բանվորների հետ հավասար, այն արհեստների նորմայով, որի համար նրանք պատրաստվում են:

118. Դժբախտ պատահարներից մեռած բանվորի ընտանիքին Վարչությունը պարտավոր է տալ անվերադարձ նպաստ, մեռածի միջին աշխատավարձի հաշվով մի ամսվա համար, անկախ ապահովագրական դանձարկղից տված նպաստից:

Ծանոթություն.—Ցերմատարդ բանվորների կենցաղը բարելավելու և ամառանոց ու լաղեր ուղարկելու համար Վարչությունը պարտավոր է հատկացնել 300 ռուբլի:

119. Հանրակացարանների փոխարեն գրամական փոխհատուցում տալը չի թույլատրվում. բացառիկ դեպքերում, երբ հնարավոր չէ բնակարան տրամադրել, վարչությունը, համաձայնության գալով Միության հետ, վճարում է հանրակացարանի փոխարեն գրամական փոխհատուցում ամսական 3 ռուբլի:

Ծանոթություն.—Բանվորի հիվանդության դեպքում հանրակացարանում նրա տեղը պահվում է, մինչև հիվանդանոցից վերադառնալը: Հարգելի պատճառով բնակարանի փոխհատուցում ստացող բանվորների բացակայության դեպքում (արձակուրդ, հիվանդություն, զինվորական ծառայության կանչելը) շարունակվում է փոխհատուցման վճարելը բացակայողին:

120. Վարչությունը պարտավոր է վճարել փոխադրության փաստացի ծախսը, գնալ-գալու համար, բոլոր բանվորներին՝ այն դեպքում, եթե նրանք ապրում են իրենց աշխատավայրից 3 կիլոմետր և ավելի հեռավորության վրա:

121. 500 և ավելի բանվորներ ունենալու դեպքում Վարչությունը պարտավոր է իր հաշվով պահել հատուկ

աշխատակից՝ ազատված բոլոր կազմակի աշխատանքներից, տեխնիկական անվտանգության և հսկողության համար, վորը պետք է լինի տեխնիկական կրթությամբ:

122. Սոցկենցաղային խմբակի ներկայացուցիչները, տեղկոմի պահանջով, կարիք լեղած ժամանակ՝ ազատվելու են աշխատանքից աշխատավարձի և տեխնիկական անվտանգության հարցերը քննելու համար,— ընդհանուր առմամբ վոչ ավելի քան ամսվա մեջ 8 ժամ: Այդ որերի համար Վարչությունը վճարելու է ազատվածին իր միջին աշխատավարձի հաշվով:

9. ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ, ՏԵՂՊՈՄԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

123. Միութենական աշխատանքներ կատարելու և միութենական մարմինները պահպանելու համար Վարչությունը պարտավոր է հատկացնել բանվոր-հասայողներին վճարած ամբողջ աշխատավարձի 1 տոկոսի չափով, իսկ բանվորների մեջ կուլտ-կրթական աշխատանքներ տանելու համար հատկացնել 1,25 տոկոսի չափով, բնդամենը՝ 2,25 տոկոսի չափով,— ռոճիկները վճարվելուց հետո՝ յերեք (3) որվա ընթացքում:

Ծանոթություն.—Սույն պարագրաֆում թված բոլոր մուծումները Վարչությունը պարտավոր է վճարել, մուծելով այն տեղկոմի ընթացիկ հաշվին կամ կանխիկ վճարելով նրան: Այդպիսիները տեղկոմի ներկայացուցչին վճարելիս ամեն անգամ պետք է պահանջել նրանից լիազորագիր, ստորագրված տեղկոմի մյուս յերկու անդամների կողմից: Սոցցաղ. ապահովման ստորագրության ձևը տեղկոմը կամ խմբկոմը նախապես տալիս է Վարչությանը:

124. Բացի թված ծախսերից, Վարչությունը տրամադրելու է, առանց վարձի, տեղկոմին նաև մի սենյակ, լրիվ կահավորված (գրասեղան, աթոռներ և այլն) վառելիք, լուսավորություն: Բացի այդ էլ սրահ,— առնվազն ամիսը մի անգամ ընդհանուր ժողովներ հրավիրելու համար:

125. Յեթե տեղկոմի գրասենյակը գտնվում է ձեռնարկության ներսից դուրս, Վարչությունը պարտավոր է վճարել տեղկոմին շենքի վարձը:

Բացի այդ, թե շենքում և թե հանրակացարաններում Վարչությունը պարտավոր է տեղկոմին տրամադրել հատուկ կահավորված սենյակ լուսավորությամբ և վառելիքով, մատուցական և խմբակային պարապմունքների համար: Այդ սենյակի նորոգությունը պարտավոր է կատարել Վարչությունը ըստ պահանջի: Վարձով վերցրած հանրակացարաններին կից Վարչությունը վարձելու է նաև կարմիր անկյան համար սենյակ:

126. Խորհրդային, կուլտկցական, կոոպերատիվ, պրոֆ. և այլ հասարակական մարմինների կողմից հրավիրված համագումարներին, կոնֆերանսներին, պլենումներին և լիազորական ժողովներին մասնակցելու համար ընտրված բոլոր պատգամավորների աշխատավարձը, նրանց տեղգործության ամբողջ ժամանակամիջոցում, վճարելու է Վարչությունը, ընտրված պատգամավորների միջին աշխատավարձի հաշվով:

Բրիգադային կազմից ընտրված բանվորներին (Վարչության և Միության փոխհամաձայնությամբ) նույնպես վճարելու է միջին աշխատավարձի հաշվով, բրիգադայի մեջ աշխատելու ժամանակամիջոցի համար:

10. ՃԱՐՏԱՐԱՊԵՏ-ՏԵԽՆԻԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

127. Հավաքական պայմանագրի այս մասը տարածվում է Ճ. Տ. աշխատավորների տարիֆային տեղեկատուով բոլոր պաշտոնների աշխատակիցների վրա, ինչպես և պայմանագրին կցված ցուցակում նախատեսված պաշտոնների վրա (հավելված №...):

Ծանոթություն.— Վարչա-տեխնիկական դեկավար պաշտոնների համար (աշխոդեկի և բարձր պաշտոնների համար) թեկնածուներ է առաջարկում ևս Միությունը, ըստ վերում նրանց բնդունելու վերջնական վորոշումը վերապահվում է Վարչությանը:

128. Ճարտ.-տեխնիկ. աշխատավորների աշխատանքից հեռացնելու դեպքում, համաձայն Աշխատանքի 47-րդ հոդվածի «ա» և «բ» կետերի, պետք է նախազգուշացնել գրավոր կերպով մի ամիս առաջ: Իր ցանկությամբ հեռանալու դեպքում ևս ճարտ.-տեխնիկ. աշխատավորը պարտավոր է մի ամիս առաջ հայտնել Վարչությանը գրավոր ձևով: Միաժամանակ Վարչությունը այդ մասին պետք է հայտնի Աշխոդեկոմատին:

Ծանոթություն.—Այն դեպքում, երբ հանձնարարված աշխատանքները կիսավարտ են կամ դեռ չեն հանձնված, Վարչությունը կարող է ՃՏՄ-ի համաձայնությամբ հեռացնել հեռացումը, մինչև գործի վերջնական ավարտումը, տալով աշխատավորին առանձին (լրացուցիչ) վարձատրություն:

129. Ճարտ.-տեխնիկական աշխատավորների վարձատրության չափը սահմանվում է կառուցողների Կենտկոմի 1930 թ. հրատարակված տարիֆային տեղեկատուով, համաձայն նրանց տարիֆային ցանցի, 1:4 հարաբերականով, հետևյալ համեմատական կարգերով՝

Կարգ	Գործակից	Գումար
1	1,0	125—
2	1,10	137—50
3	1,20	150—
4	1,30	162—50
5	1,40	175—
6	1,55	193—75
7	1,70	212—50
8	1,85	231—25
9	2,00	250—
10	2,20	275—
11	2,40	300—
12	2,60	325—
13	2,85	356—25
14	3,15	393—75
15	3,50	437—50
16	4,00	500—00

130. Ինժ. տեխ. աշխատավորների տարիֆային կարգի ամսական ռոճիկը սահմանվում է 125 ռուբ.:

131. Կարգերի բաժանումը ըստ պաշտոնների կատարում է Վարչությունը: Կարգերի բաշխումից առաջացած կոնֆլիկտները քննում է ԳԿՀ-ը, հրավիրելով ճարտ.-Տեխն. Սեկցիայի ներկայացուցչին:

132. Այն պաշտոնները, որոնք չեն նախատեսված

կառուցողների կենտկոմի կազմած ցուցակի մեջ, այս կամ այն ճարտարապետ-տեխնիկի համար վորոշվում են ԳԿՀ-ի կողմից, համապատասխան՝ տվյալ անձի աշխատանքի բնույթին, դասելով նրան տարիֆ-տեղեկատվով նախատեսված պաշտոններից մեկի կարգում:

133. Տեխնիկական, արտադրական և տնտեսական նվաճումների համար ճարտ.-տեխ. աշխատավորը, համաձայն 1929 թ. 1/1 հրահանգի, ստանալու է պարգև:

134. Ճարտ.-տեխ. աշխատավորների ընդունելությունը, տեղափոխելը և աշխատանքից հեռացնելը կատարում է Վարչությունը, հայտնելով այդ մասին տեղկոմին և ՃՏՍ-ին:

135. Վարչությունը պարտավոր է ՃՏՍ-ին մասնակից դարձնել ճարտ.-տեխնիկական ուժերին ռացիոնալ կերպով դասավորելու գործում այս կամ այն պաշտոնում:

ա) ՃՏՍ իր հերթին պարտավորվում է աջակցել Վարչությանը ճարտ.-տեխ. կադրերը համապատասխան ձևով ոգտագործելու համար:

136. Վարչությունը, տեղկոմը և ՃՏՍ-ն պարտավոր են, պարբերաբար, պայքարել բանուժի և ճարտ.-տեխն.-ի հոսունության դեմ:

137. Ճարտ.-տեխնիկների արձակուրդները սահմանում է Վարչությունը վերջնականապես Մխության հետ համաձայնության գալուց հետո, հետևյալ ձևով:

ա) Չափավորված բանվորական որ ունեցող ճարտ.-տեխնիկների Մխության և Վարչության համաձայնությամբ արվելու է, ըստ դնացողի բնավածության, 3 շաբաթից մինչև մեկ ամիս արձակուրդ:

138. Ճարտ.-տեխնիկ. աշխատավորները իրավունք ունեն ապատ ժամերին զբաղվել արտադրական գիտական փորձերով, ոգտվել արխիվներից, թանգարաններից և լաբորատորիաներից, այն պայմանով, վոր իրենց նորմալ աշխատանքները չտուժեն դրանից:

139. Ճարտ.-տեխնիկների վորակի բարձրացման համար Վարչությունը պարտավոր է՝

ա) Գործուղել նրանց համապատասխան դասընթացները լրացուցիչ կերպով վերավորակավորվելու, տեղական ՃՏՍ-ի հետ համաձայնության գալով (վերապատրաստման ուղարկվելիք թեկնածուների թվի և անձնավորությունների մասին):

բ) Իր հաշվին 2 հոգու գործուղել Մխության շինարարական զանազան վայրերը, գիտական եքսկուրսիաներ կատարելու համար:

գ) Իր հաշվին գործուղել ճարտ.-տեխնիկներին գիտական տեխնիկներին համագումարներին և խորհրդակցություններին մասնակցելու: Բոլոր նման գործուղումների ժամանակ ուղարկվածի միջին աշխատավարձը պահպանվում է:

դ) Կազմակերպել տեխնիկական գրադարաններ, իսկ զոյություն ունեցածները նոր տեխնիկական գրքերով լրացնել— վորպեսզի ճարտ.-տեխնիկներն ոգտվեն այդ գրադարանից:

140. Ճարտ.-տեխնիկների մեջ պրոֆ.-աշխատանք տանելու համար ձեռնարկությունը ամիսը 10 ժամով պետք է ապատի այն մասնագետին, վորին ՃՏՍ-ն ցույց կտա:

141. Համաձայն սույն պայմանագրին կցված ցուցակի, Վարչությունը պարտավոր է տալ ինժ.-տեխնիկներին և լաբորատորներին արտհագուստներ:

142. ՃՏՍ-ն Միության հետ միասին, պարտավոր է աշխատանքներ տանել ճարտ.-տեխնիկներին ամրացնելու աշխատանքներին մինչև շինության ավարտելը, կամ 5-ամյակի վերջը:

143. Վարչությունը պարտավոր է հատկացնել համապատասխան գումար ՃՏՍ-ին՝ ռացիոնալացման միջոցներ ստեղծելու ծախքերի համար:

144. Բացի այդ, համապատասխան միջոցներ են հատկացվում ճարտ.-տեխնիկ. աշխատավորներին պարգևատրելու, եթե նրանց կողմից ռացիոնալացման արժեքավոր առաջարկներ են եղել:

11. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀՈԴՎԱԾՆԵՐ

145. Վարչությունը պարտավոր է մշակել ներքին կարգապահության կանոններ, ելնելով Աշխատողկոմատի կողմից հաստատված որոնակելի նախագծից և տեղական պայմաններից,— մտցնելով համապատասխան լրացումներ, վորից հետո համաձայնեցնել այդ Միության հետ: Ներքին կարգապահության համար նախատեսված պայմանները կյանքում կիրառվելու են Աշխատողկոմատի կողմից հաստատվելուց հետո:

146. Սույն պայմանագրի տպագրման հետ կապված բոլոր տեսակի ծախքերը կատարվելու են Վարչության հաշվին, բացի դրանից Վարչությունը պարտավոր է սույն պայմանագրից փոքրիկ գրքույկների ձևով տպագրել տալ մոտ 500 որինակ հայերեն լեզվով, բաժանելու բոլոր բանվորներին ձրի:

147. Բազմացնել գնացուցակները բրոշյուրի ձևով և բաժանել,— ամեն մի բրիգադայի ներկայացուցչին մեկական որինակ տալով կամ գնել այդպիսին Հայպետչինից:

148. Վճարել պայմանագրի կնքելու և գրանցելու բոլոր ծախքերը:

149. Իրավական կողմերը հանդիսանում են Կառուցողների Միությունը՝ ի դեմս Վարչամ Հարությունյանի և ակադեմիկ Ալ. Իվ. Թամանյանը Վարչության կողմից:

Կառուցողների Միության ներկայացուցիչ՝
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վարչության ներկայացուցիչ՝ Ա. ԹԱՄԱՆՅԱՆ

Սույնին կցվում են՝

Հավելված № 1 . . . .
» № 2 . . . .
» № 3 . . . .
» № 4 . . . .
» № 5 . . . .
» № 6 . . . .
» № 7 . . . .
» № 8 . . . .
» № 9 . . . .
» № 10 . . . .

ՑՈՒՑԱԿ

Այն արհեստավորների, վորոնք աշխատում են իրենց գործիքներով յեվ վորոնց գործիքների մաշման համար տրվում է դրամական փոխհատուցում հետեվյալ չափով (կետ.....)

1. Քարտաշ-վորմնադիրներին	1	տոկոս
2. Պատ շարող վորմնադիրներին	$1^1/_2$	տոկոս
3. Քարտաշներին	1,5	»
4. Սվաղչիներին	$^1/_4$	»
5. Ներկարարներին	$^1/_2$	»
6. Թիթեղագործներին	$^1/_2$	»
7. Ասֆալտագործներին	$^1/_4$	»
8. Քարահանքի քար կտրող բանվորներին	1,5	»
9. Շչերեն ջարդող բանվորներին	$^1/_2$	»
10. Ապակի կտրողներին	1	»
11. Խզարչիներին	1	»
12. Վառարանագործներին	$^1/_4$	»
13. Ջրմուղ անցկացնող փականագործներին	$1^1/_2$	»
14. Դարբիններին	1,5	»
15. Հյուսն ու ատաղձագործներին	$1^1/_2$	»
16. Փականագործներին	1	»

Կառուցողների Միության ներկայացուցիչ՝
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վարչության ներկայացուցիչ՝ Ա. ԹԱՄԱՆՅԱՆ

ՑՈՒՑԱԿ

Վտանգավոր աշխատանքներում աշխատող բանվոր-ծառայողների, վորոնց տրվում է լրացուցիչ արձակուրդ (հավաքական պայմանագրի կետ.....)

1. ՏՈՆԵԼՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

1. Ծակողները
2. Զաբոյշչիկները
3. Կրեպիլշչիկները
4. Զապալշչիկները
5. Ռակաշչիկը (ստակատշչիկի)
6. Տոնելում աշխատող այլ բանվորները

2. ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՎՐԱ ԱՇԽԱՏՈՂ ՇՈՖԵՐՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՈԴՆԱԿԱՆՆԵՐԸ

3. ԳԱԶԻ ՅԵՎ ԿՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՑ

1. Ադսյարանների վրա աշխատող բանվորները:
2. Գործարանում բեռնող և դատարկող բանվորները:
3. Կրի պահեստներում աշխատող բանվորները.
4. Գազի գործարանների վարպետները:

4. ԳՐԱՆԻՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱՇԽԱՏ.

1. Պերֆարատորների վրա աշխատող բանվորները
2. Մեխանիզացիայի յենթարկված ստանոկների վրա աշխատող բանվորները (բրուաշատկաներ կտրողներ)

3. Մեքենայական գործիքներով բրուսչատկաներ կարող բանվորներ

4. Մեքենայացման յենթարկված արհեստանոցներում աշխատող բանվորները։

5. ՑԵՄԵՆՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՇԽԱՏՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

1. Սղացող բանվորներ

2. Պատվող վառարանների վրա այրող բանվորներ

3. Բեռնող բանվորներ, վորոնք մշտապես զբաղված են շախտային և գոսդնեյդեր վառարանների վրա

4. Գոֆման-Բերլիցի վառարաններում կրաքար դասավորող բանվորներ։

6. ՐՈՄԱԿԱՆ ՑԵՄԵՆՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱՇԽ-ԻՑ

1. Շախտինսկի վառարանը բեռնող և թափող բանվորներ

2. Կեսոնի աշխատանքների վրա զբաղված բանվորներ

3. Բանվորներ, վորոնք զբաղված են ներկարարային հատուկ աշխատանքներում (մետանի փայտի կամ շինարարության վրա) և յեթե գործադրում են ավելցուքի ներկ։

7 ԳՈՒԴՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Բոլոր բանվորները, վորոնք կատարում են գուդրոնի և ասֆալտի աշխատանքներ։

Կատուցողների Միության ներկայացուցիչ՝
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վարչության ներկայացուցիչ՝ Ա. ԹԱՄԱՆՅԱՆ

Հավելված №....

ՑՈՒՑԱԿ

Այն աշխատակիցների, վորոնք ոգտվում են լրացուցիչ արձակուրդ ստանալու իրավունքով (կես.....)

1. Դիրեկտոր— տարեկան մեկ ամսվա արձակուրդ։
2. Նրա ոգնականը— նույնպես։
3. Արտադրական բաժնի վարիչ— մեկ ամիս։
4. Գլխ. ճարտարապետ— մեկ ամիս։
5. Յենթաբաժնի վարիչները— մեկ ամիս։
6. Գլխ. հաշվապահներին և նրանց տեղակալներին— մեկ ամիս։
7. Հաշվապահներին— 18 բանվորական որ։
8. Աշխատակավարներին— մեկ ամիս։
9. Աշխատակավարների ոգնականներին (վարչա-տնտեսական մասի վարիչներին)— մեկ ամիս։
10 Արտադրության վրա անմիջականորեն զբաղված ճարտ.-տեխնիկներին— մեկ ամիս։ իսկ մալարիայի շրջանում— մեկ և կես ամիս։
11. Մեքենագրուհիներին— 18 բանվորական որ։
12. Պահեստապետ- եքսպեդիտորներին— 18 բանվորական որ։
13. Շոֆերներին, տրակտորիստներին և նրանց ոգնականներին— մեկ ամիս։
14. Կառապաններին— 18 բանվորական որ։
15. Կենտր. ադիտ. վիճակագիրներին— մեկ ամիս։
16. Արտելչիկներին (շրջիկ գանձապահներին)— 18 բանվորական որ։

17. Եքսպեդիտորներին— 18 բանվորական որ.
18. Գործերի վարիչներին— 18 բանվորական որ.
19. Իրավախորհրդատուներին—18 բանվորական որ.
20. Տանտալեմներին և բրիգադիրներին— 18 բանվորական որ:

Կառուցողների Միության ներկայացուցիչ՝
Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վարչության ներկայացուցիչ՝ Ա. ԹԱՄԱՆՅԱՆ

ՀՐԱՎԱՐԱՆ
ՀՐԱՎԱՐԱՆ
ՀՐԱՎԱՐԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0935376

293-193/p.

111

1

2936